ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.10.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ

ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-LO-2019/161

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ

Մասնակից՝ «Կարենօիլ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/102» ծածկագրով գնանշման հարցում, յուղերի, քսայուղերի և հակասառիչ հեղուկի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 26.09.2019թ.-ի թիվ 26/26-1/15877-2019 գրությամբ «Կարենօիլ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի 23.09.2019թ.-ի թիվ 01/555-19 գրության հիման վրա, 26.09.2019թ.-ին «Կարենօիլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի 26.09.2019թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և 02.10.2019թ.-ին նշանակվել է նիստ:

Գործի քննությունն ավարտվել է 02.10.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 16.10.2019թ.-ին:

2. <u>«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը</u>.

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ն 23.09.2019թ.-ի թիվ 01/555-19 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/102 ծածկագրով յուղերի, քսայուղերի և հակասառիչ հեղուկի ձեռքբերման գնման ընթացակարգում «Կարենօիլ» ՍՊԸ-ն 6-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից: Առաջնորդվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ կետով՝ «Կարենօիլ» ՍՊԸ-ին առաջարկվել է պայմանագրի ծանուցումը ստանալու պահից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում պայմանագիրը և պայմանագրի ապահովումը ներկայացնել «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ին, սակայն վերջինիս կողմից սահմանված ժամկետում պայմանագիր չի ներկայացվել:»:

Միևնույն ժամանակ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը, ներկայացրել են թիվ «ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/102» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Կարենօիլ» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք կցվել են ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված գրությանը:

3. <u>«Կարենօիլ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 27.09.2019թ.-ի գրությամբ դիմել է «Կարենօիլ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 26.09.2019թ.-ի թիվ 26/26-1/15877-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Մասնակցի գրավոր կարծիքը:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում, առարկություններ կամ կարծիք՝ չներկայանալով նաև նիստերին:

4. <u>ՍՑ-LO-2019/161 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից յուղերի, քսայուղերի և հակասառիչ հեղուկի ձեռքբերման նպատակով 29.07.2019թ.-ին հայտարարվել է «ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/102» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Կարենօիլ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 21.08.2019թ.-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է 6-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել «Կարենօիլ» ՍՊԸ-ին:

21.08.2019թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ:

Հանձնաժողովի քարտուղարի կողմից 30.08.2019թ.-ին Մասնակցին ուղարկվել է պայմանագրի կնքելու առաջարկ և պայմանագրի նախագիծը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.09.2019թ.-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ 30.08.2019թ.-ին 6-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից՝ «Կարենօիլ» ՍՊԸ-ին ուղարկվել է պայմանագիր կնքելու ծանուցում, սակայն վերջինս մինչև օրենսդրությամբ սահմանված ժամկետի ավարտը չի ներկայացրել իր կողմից հաստատված պայմանագրի օրինակը:

Նույն արձանագրության համաձայն՝ հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 49-րդ և 50-րդ կետերով՝ «ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/102» ծածկագրով ընթացակարգի 6-րդ չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչված «Կարենսիլ» ՍՊԸ-ին զրկել է պայմանագիր ստորագրելու իրավունքից:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 26.09.2019թ.-ի թիվ 26/26-1/15877-2019 գրությամբ «Կարենսիլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10

աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 13-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը.

Նույն կետի 14-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Վերոնշյալ իրավակարգավորումների համադրված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն ու պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ վերջինիս գործողությունները (անգործությունը) գնահատվում են, որպես պայմանագիր կնքելուց ընտրված մասնակցի կողմից հրաժարում:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով, քանի որ իր գործողություններով (անգործությամբ) պատվիրատուին չներկայացնելով պայմանագրի օրինակը և/կամ ապահովումը զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից:

Սույն գործի փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից հանդերձանքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/102» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Կարենօիլ» ՍՊԸ-ն Հանձնաժողովի 21.08.2019թ.-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ 6-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից:

21.08.2019թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ:

Հանձնաժողովի 23.09.2019թ.-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ 30.08.2019թ.-ին 6-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից՝ «Կարենօիլ» ՍՊԸ-ին ուղարկվել է պայմանագիր կնքելու ծանուցում, սակայն վերջինս մինչև օրենսդրությամբ սահմանված ժամկետի ավարտը չի ներկայացրել իր կողմից հաստատված պայմանագրի օրինակը, ինչով պայմանավորված հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 49-րդ և 50-րդ կետերով՝ «ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/102» ծածկագրով ընթացակարգի 6-րդ չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչված «Կարենօիլ» ՍՊԸ-ին զրկել է պայմանագիր ստորագրելու իրավունքից:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Կարենօիլ» ՍՊԸ-ն, որպես ընտրված մասնակից, հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնելով պայմանագիրը և/կամ պայմանագրի ապահովումը, հրաժարվել է պայմանագիր կնքելուց: Ուստի, նման

պամաններում, մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով, քանի որ իր անգործությամբ պատվիրատուին չներկայացնելով պայմանագրի օրինակը և/կամ ապահովումը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 26.09.2019թ.-ի թիվ 26/26-1/15877-2019 գրությամբ «Կարենօիլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2019/161 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Կարենօիլ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**